

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈՐ»

(ՔՆՏԱԿԱՆ ԺԱՆՈՐՁԱՊՈՆԵՆԵՐԱՎ)

Գրեց՝ ՎԵՐ. Կ. Պ. ԱՍԱՆԱՅԱՆ

Ֆրեզնոյում լույս տեսած վերապատվելի Կ. Պ. Ասանայանի գրախոսվող աշխատությունը նրա 29 տարիների տնայան աշխատանքի արդյունքն է:

Սովորածովալ այդ գիրքը (527 էջ, չհաշված ներածական մասը) հենց առաջին հայացքից ուշադրություն է գրավում ոչ միայն հարուստ բովանդակությամբ, այլև արտաքինով, խնամքով, տեսարանի ձևավորմամբ:

Գրքի էջերում տեղավորված բազմաթիվ նկարները ավելի հետաքրքրաշարժ ու հասկանալի են դարձնում նյութը: Չնայած գիրքը բովանդակում է Հայ Ավետարանական Եկեղեցու պատմությունը, բայց հեղինակը այն շաղկապել է Հայոց Եկեղեցու պատմությանը և ըստ այդմ էլ ճաշակով ընտրված նկարներ է տեղավորել Հայ Եկեղեցու կյանքին վերաբերող:

Առաջին էջում հայկական մի գեղեցիկ ձևագրից արտատպված մանրանկարչության հիանալի նմուշին հետևում են Ս. Էջմիածնի վանքի (էջ 8), Խորհրդանշանի (էջ 84), Օրմանյան և Բորգոմ պատրիարքների (էջ 86), Նորին Ս. Օծուխյուն Ս. Տ. Գեորգ Ջ. Ամենայն Հայոց Հայրապետի (էջ 92), երջանկահիշատակ Խորեն Ա. Կաթողիկոսի, հանգուցյալ Գրեգորի (էջ 102) և այլ բազմաթիվ նկարներ:

Հեղինակը երկարատև աշխատանքով հավաքել է բազմաթիվ փաստաթղթեր, անտիպ վավերագրեր և այլ նյութեր, որով և աշխատությունը մեծապես շահել է, դարձել մեծ արժանիքներ ունեցող մի գործ:

Պատվարժան հեղինակի ներկա աշխատությունը պարունակում է հայ բողոքականության պատմությունը՝ իր սկզբնավորման օրից մինչև մեր օրերը: Մեկ առ մեկ պատմաբանի անալատիկայով մեկնաբանված են հայ բողոքականության առաջ գալու և ապա՝ Ազգային Մայրենի Եկեղեցուց զատվելու պատճառները:



Մանրամասնորեն շարադրված է Հայ Բողոքական Եկեղեցու հարաբերությունը Մայրենի Եկեղեցու հետ, նրա կատարած ազգային կրոնա-կրթական-լուսավորական դերը արյունոտ, ծանր ու մղձավանջալիս իրականություն դառն օրերին և այժմ նրա կատարած դերը Սփյուռքի հայության մեջ:

Հարգո հեղինակը իր աշխատության մեջ, սկզբից մինչև վերջ, հետևել է մի սրբազան զգացման, մի կարևոր սկզբունքի, որի հիմքն է կազմում շերտ հայրենասիրությունը: Հեղինակը ճշմարտացիորեն ընդգծում է, որ հայ ավետարանական իրեն հեռու ու խորթացած չի զգում Հայ Հայրենիքից և Մայրենի Եկեղեցուց: Հեղինակը ցանկանում է որքան կարելի է, Հայոց Եկեղեցու և Հայ Ավետարանական Եկեղեցիների միջև նստիկիտում բացված դադարաբանական վիճը լցնել, մոտեցնել

միմյանց, իրար հասկանալի դարձնել նրանց: «Ամեն Հայու հարկ է գիտնալ նախ իր Ազգային Մայր Եկեղեցին: Այս անհրաժեշտ է ամենուր, ըլլա անգամ Հայաստանյայց Եկեղեցիին, ըլլա հայ կաթողիկին կամ հայ ավետարանականին...: Հայ Ավետարանական Եկեղեցիին գերագույն պատասխանություններն մին է պրպտել և գիտնալ Հայ Վոսավորչական (իմա՝ Առաքելական. — Ս.) Մայր Եկեղեցիին հոգևոր արժեքները, վերականգնացնել, յուրացնել և զանազան մշտաբան զարգացնել ընդհանուր հայ ազգի օգտին համար, իբր անոր օրինավոր ժառանգը», — գրում է հեղինակը (էջ 6):

Կարմիր Թիլի պես սկզբից մինչև վերջ անցնող այս սկզբունքն է, որ ախրան արժեքավոր է դարձնում աշխատանքը:

Սփյուռքի մեր եղբայր հայ ավետարանականների կամ կաթողիկեների դավանական աշխատությունները նրանց ետ չեն պահում հայրենասիրությունից կամ

իրավունք չեն տալիս նրանց մոռանալու իրենց դավաճոր նվիրական Հայրենիքը, հարազատ ժողովրդի դարավոր ավանդություններն ու սրբությունները:

Հեղինակը, առաջնորդվելով իր որդեգրած սկզբունքով, իր աշխատության մեջ համառոտակի տվել է Հայ Եկեղեցու պատմությունը, նրա ծխակատարությունը, խորհուրդները, նվիրապետությունը՝ սրանց բոլորի մասին կարճատև ծանոթություններով: Տեղ-տեղ մեջբերումներ են արված Շնորհալու ամենամանրագրերից:

Շարադրելով հայ բողոքականության ծագումն ու զարգացումը՝ շաղկապված լուսնրականության և Միսիոնարականության հետ, հեղինակն անհերքելի փաստերով ապացուցում է, որ հայ ավետարանականությունը սրտի մեծ ցավով է բաժանվել Մայրենի Եկեղեցու գրկից: Ժամանակի մի քանի անհեռուտե՛ս, նեղհոգի մարդկանց անհամբեր վարվելակերպը արագացրել է այդ բաժանումը: Չնայած Հայ Եկեղեցույ իրենց կրոնական բաժանմանը, հայ ավետարանականները, սակայն, միշտ ձգտել են բարենորոգությունների ճանապարհով նորից միանալ Հայ Եկեղեցուն: Ազգային ավանդությունները և սրբությունները միշտ էլ հայ ավետարանականի սրտին մոտ են եղել:

Հեղինակը մանրամասնորեն կարողացել է կազմե. Հայ Ավետարանական Եկեղեցիների ցանկը, մեկ առ մեկ գրի է առել ավետարանական հովիվների ցուցակը, հաշվի առել նրանց կողմից բացված հայ դպրոցները, որբանոցներն ու այլ հասարակական կազմակերպությունները:

Գրքում սրտառու տողեր կան, հայկական մեծ և զեռնի օրերին նահատակված հայ ավետարանական, բաջ հովիվների մասին, մեծ ջերմությամբ են պատկերված նրանց ապրած վերջին սրտառու վայրկյանները:

Գրքում տեղ են գտել նաև աչքի ընկնող հայ ավետարանական հովիվների մեմուարներն ու հիշողությունները, օրագրական նմուշները և այլն:

Գիրքն ընթերցողին բազմակողմանիորեն ծանոթացնում է հայ ավետարանականության գոյության 100-ամյա պատմությանը, նրա անցած ուղու, Մայր Հայրենիքի և Հայ Ազգային Եկեղեցու հետ ունեցած կապի հետ:

Միով բանիվ, վերապատվելի Ատանալյանի ազնիվ ու երկարատև աշխատանքի երախայրիքը գեղեցիկ և արժեքավոր ավանդ է Միջուկի հայ պատմա-բանասիրական գրականության գանձարանում, և ողջունելի է ըստ ամենայնի:

||.

